

ՍՈՒՐԻԱ ՀԱՅՈՒԹԻՒՆՆ ՈՒ ՅԵՏՊԱՏԵՐԱԶՄԵԱՆ ՍՈՒՐԻԱՆ

Գեորգ Յակոբճեան
kevomayy@hotmail.com

ՄՈՒՏՔ

Ժողովուրդը կ'ըսէ, թէ պատերազմ մը չկայ՝ որ վերջ չունի, բոլոր՝ պատերազմներն ալ ուշ կամ կանուխ իրենց ասարտին կը հասնին: Միս կողմէ, կարգ մը իմաստասէրներ կը հաւատան, որ մարդկային կեանքը մնայուն պատերազմներն են, իսկ խաղաղութիւնը՝ պատերազմներուն միջեւ արձանագրուած դադարի, հանգիստի ու կրկին պատերազմելու վերապատրաստութեան հանգրուանն է: Այսօր, դժուար է կանխատեսել, թէ սուրիական տագնապը ե՞րբ պիտի ասարտի կամ հանգիստի ու վերապատրաստութեան հանգրուան անցնի, սակայն այս իրականութիւնը չ'արգիլել մեզ, որ մտածենք, ծրագրենք, ենթահող ունենանք եւ պատրաստուինք յետպատերազմեան Սուրիոյ:

Զեկոյցը հետեւեալ յաջորդականութեամբ պիտի ընթանայ՝

1. Խորագիրի յստակացում.
2. Սուրիահայութիւնը սուրիական ընկերութեան խճանկարին մէջ.
3. Սուրիոյ փոքրամասնութիւններուն աշխարհագրական բաժանումը.
4. Սուրիոյ յետ-պատերազմեան հանգրուանի պատկերացում.
5. Յետպատերազմեան Սուրիոյ մէջ փոքրամասնութիւններուն - ներառեալ սուրիահայերուն համար - որդեգրուելիք յարմարագոյն գաղափարախօսութիւնը.
6. Փոքրամասնութիւններու իրաւունքները ապագայ Սուրիոյ մէջ.
7. Սուրիահայութեան իրաւունքներու հիմնասիւնները.
8. Սուրիահայութեան դերն ու տեղը յետ-պատերազմեան Սուրիոյ մէջ:

ԽՈՐԱԳԻՐԻ ՅՍՏԱԿԱՅՈՒՄ

«Սուրիահայութիւնն Ու Յետպատերազմեան Սուրիան» խորագիրը լրապէս հասկնալու համար, խորագրին բաղադրիչ բառերը լուսարձակի տակ առնելը մեծ նշանակութիւն ունի:

Այսօր, սուրիահայութիւնը, սուրիական տագնապին պատճառով հետեւեալ պատկերը ունի.-

Ա. Սուրիաբնակ ու իրենց նախապատերազմեան բնակավայրերէն չտեղափոխուած սուրիահայութիւն: Օրինակ, մինչ օրս Հալէպի, Քամիշլիի, Դամասկոսի մէջ ապրող ու իրենց բնակավայրերէն չհեռացած սուրիահայութիւն:

Բ. Սուրիաբնակ, սակայն պատերազմին պատճառաւ Սուրիոյ մէջ ներքնապէս տեղափոխուած սուրիահայութիւն: Օրինակ՝ Հալէպէն

Լաթաքիա գաղթած սուրիահայություն: Այս խումբը միջազգային օրէնքին մէջ Internally Displayed People (IDP) կը կոչուի:

Գ. Հայրենիք՝ Հայաստան ու Արցախ հաստատուած սուրիահայություն:

Դ. Սահմանակից երկիրներ (Լիբանան-Թուրքիա) կամ Արեւմուտք՝ Ամերիկա, Աստրալիա արտագաղթած սուրիահայություն: Այս խումբը միջազգային օրէնքին մէջ refugees կը կոչուի:

Հետեւաբար, երբ սուրիական տազնապի պարունակին մէջ սուրիահայություն կ'ըսենք, վերոնշեալ խմբաւորումները նկատի պէտք է ունենանք եւ ո՛չ միայն անոնք, որոնք տակաւին Սուրիա կը բնակին:

Իսկ երբ «յետպատերազմեան Սուրիա» կ'ըսենք, նախ պէտք է նշենք, թէ հակառակ որ փաստօրէն պետական իշխանութեան եւ տիրութեան իմաստով որոշ փոփոխութիւններ արձանագրուած են, սակայն մինչեւ այս պահը, Սուրիան միջազգային եւ իրաւականօրէն կը պահէ իր դիրքը, իր պետա-իրաւական կարգավիճակը այնպէ՛ս՝ ինչպէս որ էր նախքան տազնապին սկսիլը: Այս զեկոյցը կը հիմնաւորուի մինչ օրս Սուրիոյ պահած իրաւական-սահմանային ներկայ կարգավիճակին վրայ, անկախ այն հաւանականութիւններէն, որ կրնայ երկիրը նոր սահմանագծումներու տանիլ, կամ պահել իր ներկայ կարգավիճակը, հողային ամբողջականութիւնը:

ՍՈՒՐԻԱ ՀԱՅՈՒԹԻՒՆԸ ՍՈՒՐԻԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԽՃԱՆԿԱՐԻՆ ՄԷՋ

Սուրիոյ իշխանութիւնները իրենց քաղաքական բառամթերքին մէջ յաճախ «սուրիական խճանկար» բառեզրը կը գործածեն: Իրաւ ալ, Սուրիան բազմազգ, բազմամշակոյթ, բազմալեզու եւ բազմակրօն ընկերութիւններէ կը բաղկանայ: Սուրիահայութիւնը մէկ ու կարեւոր բաղադրիչն է սուրիական ընկերութեան:

Սուրիոյ մէջ մէկ տեսակի մեծամասնութիւն չկայ, ո՛չ ալ մէկ տեսակի փոքրամասնութիւն: Այս իմաստով, բազմաթիւ, երբեմն ալ հակասական տուեալներ ու զեկոյցներ կան Սուրիոյ փոքրամասնութիւններու եւ մեծամասնութիւններու թիւին եւ համեմատական պատկերին խնդրով: Հասկնալի է՝ քաղաքական պատճառներ կան թիւերու եւ տուեալներու ճշգրտութեան բացակայութեան մէջ...: Ամէն պարագայի, միջազգային օրէնքին ճշտած փոքրամասնութիւններու տեսակներէն մեկնելով Սուրիոյ փոքրամասնութիւնները կարելի է հետեւեալ խումբերուն բաժնել.-

- Յեղային առումով, մեծամասնութիւն են արաբները, փոքրամասնութիւն՝ քիւրտերը, ասորիները, թիւրքմէնները, հայերը:
- Կրօնական առումով՝ մեծամասնութիւն կը կազմէ իսլամութիւնը, իսկ փոքրամասնութիւն՝ քրիստոնէութիւնը, եգիտիութիւնը, հրէութիւնը:

- Լեզուական առումով՝ մեծամասնություն կը կազմեն արաբախօսները, իսկ փոքրամասնություն՝ հայախօսները, քրտախօսները, թրքախօսները, ասորերէն կամ արամէրէն խօսողները:

- Հպատակութեան առումով՝ մեծամասնություն կը կազմեն սուրիացիները, փոքրամասնություն՝ հայերը որոնք ՀՀ քաղաքացիութիւն ունին, թուրքերը, լիբանանցիները, պաղեստինցիները են.:

Միջազգային օրէնքին ճշտած փոքրամասնութիւններու տեսակներէն բացի, փոքրամասնութեան այլ տեսակ մըն ալ կարելի է ճշտել Սուրիոյ պարագային, որ յարանուանական գետնի վրայ կարելի է ներկայացնել: Բնակչութեան մեծամասնութիւնը սիւննի իսլամներ են, իսկ փոքրամասնութիւններ են ալեւի, շիիթ, իսմայիլի, տիւրզի եւ քրիստոնէական յարանուանութիւնները:

Հետաքրքրական է, որ սուրիահայութիւնը, միատեսակ փոքրամասնութիւն չէ, այլ կ'ընդգրկէ վերոնշեալ բոլոր տեսակները: Սուրիահայութիւնը նաեւ միաժամանակ ցեղային, կրօնական, լեզուական, ազգային ու յարանուանական փոքրամասնութիւն է:

ՍՈՒՐԻՈՅ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԲԱԺԱՆՈՒՄԸ

Պատմականօրէն, Սուրիոյ փոքրամասնութիւնները աշխարհագրական խտացուած շրջաններու մէջ ապրած են, յաճախ իրար քով, չտարածուած, իսկ կեդրոնական քաղաքներէն հեռու եւ գիւղական շրջաններու մէջ՝ այլ հաւաքականութիւններէ անջատ: Օրինակ, քիւրտերը Սուրիոյ հիւսիս եւ հիւսիս-արեւելան շրջանները կ'ապրին, տիւրզիները՝ հարաւը, ալեւիները՝ արեւմուտքը են.:

Այս իրականութիւնը կու գայ հաստատելու թէ Սուրիոյ իւրաքանչիւր շրջան իրեն յատուկ ընկերային դիմագիծ ու ապրելակերպ ունի, որ յատուկ ուշադրութիւն եւ ռազմավարութիւն կը պահանջէ:

1950ականներուն, Սուրիոյ իշխանութիւնները «արաբական գօտի» ծրագրին տակ, փորձած են Սուրիոյ արեւելեան շրջաններու ժողովրդագրական պատկերը փոխել, մեծամասնութեամբ քիւրտերով բնակուած շրջաններու մէջ արաբ պետեւիներ վերաբնակեցնելով:

Մինչեւ սուրիական տագնապի սկիզբը Սուրիոյ փոքրամասնութիւններուն աշխարհագրական բաժանումը գրեթէ անփոփոխ էր, սակայն տագնապին ընթացքին եւ այսօր որոշ փոփոխութիւններ արձանագրուեցան ու կ'արձանագրուին տակաւին, յատկապէս այն շրջաններուն մէջ, որոնք ընդդիմադիր զինեալ կողմերուն տիրապետութեան տակ անցան:

ՍՈՒՐԻՈՅ ՅԵՏՊԱՏԵՐԱԶՄԵԱՆ ԱՆՅՈՒՄԱՅԻՆ ՀԱՆԳՐՈՒԱԼԸ

Անցնող տասնամեակներուն հակամարտություններ ապրող միջավայրեր երբ հակամարտութենէն խաղաղութեան գործընթացին կը լծուէին՝ անցումային արդարութեան (Transitional Justice) հանգրուանէ մը կ'անցնէին: Անցումային արդարութեան հոլովոյթը երկրէ երկիր, միջավայրէ միջավայր կը տարբերի եւ դժուար է Սուրիոյ անցումային արդարութեան հանգրուանին մասին յստակ պատկերացում ունենալ:

Ամէն պարագայի, Սուրիոյ յետպատերազմեան հանգրուանին կարելի է հետեւեալ զարգացումները կանխանշել.-

Սահմանադրութեան փոփոխութիւն, ընկերություններու հաշտեցման գործընթացներ, անցումային կառավարութեան կազմութիւն՝ ներկայ իշխանութիւններուն եւ ընդդիմադիր կողմերու մասնակցութեամբ, համաներում եւ կամ հակառակը պատերազմի ոճրագործներու դատավարութիւններ, նոր ընտրութիւններ, միջազգային կազմակերպութիւններու առաւել ներգրաւածութիւն, վերակառուցման սկիզբ, գաղթականներու վերադարձ, բանակին՝ քաղաքացիական վայրերէն աստիճանական հեռացում, զոհուածներու-վիրաւորներու եւ անշարժ գոյքերուն հասած վնասներու փոխհատուցում եւն.:

ՅԵՏՊԱՏԵՐԱԶՄԵԱՆ ՍՈՒՐԻՈՅ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ ՈՐԴԵԳՐՈՒԵԼԻՔ ԳԱՂԱՓԱՐԱԽՕՍՈՒԹԻՒՆԸ

2011էն առաջ, Սուրիան յստակ ազգային գաղափարախօսութիւն մը չունեցաւ, որ իր շուրջ համախմբէր Սուրիոյ մէջ բնակող բոլոր ընկերությունները: Սուրիան 1946ի ֆրանսական գաղութատիրութենէն ետք եւ անկախութենէն ի վեր, իր գաղափարախօսութիւնը փորձեց հիմնական երկու բեւեռներու մէջ կազմաւորել: Առաջինը արաբամէտ գաղափարախօսութիւնն էր, որ հիմնուած է արաբական աշխարհի եւ արաբ ժողովուրդի միասնութեան գաղափարախօսութեան վրայ, իսկ երկրորդը՝ սուրիամէտ գաղափարախօսութիւնն էր, որ հիմնուած էր պատմաաշխարհագրական Սուրիա ըմբռնումին վրայ (այս պարագային Սուրիան կը հասկցուէր իբրեւ Սուրիական Լեւանթը, Պիլատ Ալ Շամը, որ կ'ընդգրկէր ներկայ Սուրիան, Լիբանանը, Պաղեստինը, Յորդանանն ու Իրաքը, նաեւ Կիլիկիան): Անցնող տասնամեակներուն իշխանութիւնները Պասս Կուսակցութեան որդեգրած գաղափարաբանութեամբ փորձեցին այս երկու բեւեռներուն միջեւ հաւասարակշռութիւն մը գտնել, սակայն արհեստական գաղափարախօսութիւն մը դուրս եկաւ, որովհետեւ, բոլորին համար ընդունելի ու հարազատ չէր անիկա: Սուրիոյ քաղաքացիներէն շատեր, գաղտնօրէն աւելի փարած էին իրենց կրօնական, ցեղային կամ յարանուանական գաղափարախօսութիւններուն ու պատկանելիութեան, քան՝ պետութեան որդեգրած պաշտօնական գաղափարախօսութեան:

Խորքին մէջ, սուրիական տազնապը սկսելին իվեր, վերոյիշեալ երկու գաղափարախօսութիւններու (կամ անոնց վերամշակուած տարբերակներու) առճակատում կայ Սուրիոյ մէջ: Մէկը իսլամականութեան, միւսը սուրիական-արաբական գաղափարախօսութիւնն է: Այս երկու գաղափարախօսութիւնները դաւանողներն են իրարու հակադիր կողմերը, որոնք իրար դէմ գէնք բարձրացուցած են այսօր:

Ամէն պարագայի, ո՛չ իսլամականութիւնը, ո՛չ ալ արաբականութիւնը կրնան միատրել Սուրիոյ բազմաբնոյթ ընկերութիւնները: Սուրիոյ մէջ ոչ-արաբ փոքրամասնութիւնները իրենք զիրենք արաբ չեն զգար, հետեւաբար անոնք կը մերժեն արաբականութեան վրայ հիմնուած պետական գաղափարախօսութիւն մը ընդունիլ: Միւս կողմէ, նկատի ունենալով սիւննի եւ շիիթ հատուածներուն միջեւ եղած լարուածութիւնը, ինչպէս նաեւ հաշուի առնելով ո՛չ-իսլամ եւ չափաւոր-իսլամ սուրիացիներուն մտավախութիւնները՝ իսլամական իշխանութեան յառաջացումէն, կարելի է որպէս միատրոդ գործօն որդեգրել սուրիական պետական քաղաքացիութեան՝ «սուրիականութիւն» (Syrianism), գաղափարախօսութիւնը, զայն օգտագործելով Սուրիոյ բազմազգ, բազմակրօն, բազմալեզու եւ բազմամշակոյթ ընկերութիւնները հաշտութեան եւ համակեցութեան առաջնորդելու:

Հետեւաբար, սերտելով Սուրիոյ փոքրամասնութիւններուն ունեցած հեռնակարներներն ու պատկերացումները, կարծիքներն ու գաղափարները կարելի է ըսել, թէ Սուրիոյ փոքրամասնութիւններուն մեծ մասը (բացի կարգ մը քրտական խմբաւորումներէ) կը նախընտրէ ունենալ սուրիական քաղաքացիական գաղափարախօսութիւն մը, ուր ամէն ինչ՝ ուսումնակրթական համակարգէն մինչեւ ներքին ինքնակառավարական մարմիններ հիմնուած ըլլան զուտ քաղաքացիական-ժողովրդավարական սկզբունքներու վրայ:

Ասոնք Սուրիան կ'ուզեն տեսնել որպէս միատրոդ տարր, որպէս հովանոց, որուն հովանիին տակ բոլորին արդար ու հաւասար տեղ տրամադրուած ըլլայ:

Սուրիական քաղաքացիական պատկանելիութեան գաղափարախօսութեան որդեգրումը յաջողութեան մեծ հաւանականութիւն ունի, որովհետեւ.-

- Սուրիան երկար տարիներու համակեցութեան պատմական փորձ ունի, Սուրիոյ մէջ տասնամեակներ շարունակ ընկերութիւնները իրենց տարբերութիւններով հանդերձ յաջողած են միասին ապրիլ:
- Սուրիոյ մէջ կրօնական եւ ընկերային ղեկավարները ազդու դերակատարութիւն ունին, իրենց խօսքերն ու գործերը կրնան հաւաքականութիւններուն վրայ ուղղակի ազդեցութիւն ունենալ: Անոնք կրնան ընկերութիւնները համակեցութեան եւ հաշտութեան

առաջնորդել, երբ որդեգրուած պետական գաղափարախօսութիւնը կը յարգէ ու կ'ընդունի բոլորին տարբերութիւններն ու իրայատկութիւնները:

- Սուրիան միջազգային օրէնքին բարեկամ երկիր է: Ան միջազգային օրէնքին մէջ տեղ գտած սկզբունքներուն, պայմանագրերուն եւ պարտաւորութիւններուն մեծ մասը որդեգրած է (թէկուզ միայն իրաւականօրէն) եւ տեղական օրէնքներուն վրայ գերադաս ըլլալու հանգամանք տուած է անոնց:

ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԻՐԱԻՈՒՆՔՆԵՐԸ ԱՊԱԳԱՅ ՍՈՒՐԻՈՅ ՄԷՋ

Ապագայ Սուրիոյ մէջ փոքրամասնութիւններուն տրամադրուելիք իրաւունքները կարելի է գտնել միջազգային օրէնքին մէջ: Կարելի է յիշել անոնցմէ միայն քանի մը հատը, որ կը դրսեւորուի պայմանագրութիւններու ձեւով, ինչպէս՝ Քաղաքական եւ Քաղաքացիական Իրաւունքներու Միջազգային Պայմանագիրը, 1993ին հռչակուած Յեղային, Ազգային, Կրօնական Ու Լեզուական Փոքրամասնութիւններու Միջազգային Յայտարարութիւնը, Բոլոր Տեսակի Խտրականութիւնները Վերացնելու Պայմանագրութիւնը, Մանուկներու Իրաւունքներու Միջազգային Պայմանագիրը, Լեզուական Իրաւունքներու Համաշխարհային Յայտարարութիւնը, Մարդկային Իրաւունքներու Համաշխարհային Յայտարարութիւնը են.:

Այս իրաւունքները երաշխաւորելու, ապահովելու եւ պաշտպանելու համար անհրաժեշտ է փոքրամասնութիւններուն պետական եւ իրաւական ճանաչում տալ: Ներկայ Սուրիան պետականօրէն փոքրամասնութիւններու իրաւունքները չի ճանչնար: Սուրիոյ պետական իրաւահամակարգը կը ճանչնայ կրօնական կարգ մը յարանուանութիւններ եւ անոնց որոշ իրաւունքներ կու տայ:

Ոչ միայն Սուրիան, այլեւ շատ պետութիւններ կը խուսափին փոքրամասնութիւններուն օրինական ճանաչում տալէ, քանի մը նկատառումներէ մեկնած: Երբեմն իշխանութիւնները կը կարծեն, թէ փոքրամասնութիւններուն ճանաչում շնորհելը անջատողական քայլերու կրնայ առաջնորդել, ներքին խլրտումներ կրնայ յառաջացնել, պետութեան կայունութիւնը կրնայ վտանգել, անհաւասարութեան առաջնորդել են.: Սակայն միջազգային փորձառութիւնը կու գայ հաստատելու, որ այն երկիրներուն մէջ ուր փոքրամասնութիւններու իրաւունքները չեն յարգուած, այդ երկիրներուն մէջ ներքին հակամարտութիւններ ծագելու հաւանականութիւնը շատ անելի մեծ է, քան ինչ՝ ուր ճանաչուած են ու կը յարգուին այդ իրաւունքները:

Փոքրամասնութիւններու առնչուող այլ դրիտարկում մը եւս կը նկատուի Սուրիոյ մէջ, ըստ որուն՝ Սուրիոյ մէջ ընդհանրապէս

փոքրամասնությունները չեն ճանչցուած, որովհետեւ բոլոր քաղաքացիները մէկ ու հաւասար են օրէնքի եւ պարտաւորութեան առջեւ: Պէտք է նշել, որ փոքրամասնություններուն իրաւունքերը ճանչնալը չի հակասեր բոլոր քաղաքացիներուն օրէնքին եւ պարտաւորութեանց խնդրով համահաւասար ըլլալու սկզբունքին: Որովհետեւ, միշտ չէ որ հաւասարութիւն շնորհելը արդարութեան կ'առաջնորդէ, կամ արդարութիւն կը հաստատէ: Փոքրամասնությունները, իրենց դրուածքով յաւելեալ զօրակցութեան եւ իրաւասութիւններու կը կարօտին, որպէսզի իրենք զիրենք գործնականապէս համահաւասար զգան մեծամասնութեան հետ:

ՍՈՒՐԻԱՀԱՅՈՒԹԵԱՆ ԻՐԱԻՈՒՆՔՆԵՐՈՒ ՀԻՄՆԱՍԻՒՆԵՐԸ

Սուրիահայութիւնը վերջին տասնամեակներուն համեմատաբար խաղաղ ու կայուն կեանք մը ունեցած է Սուրիոյ մէջ, օժտուած ըլլալով որոշ արտօնություններով եւ իրաւասութիւններով, սակայն այսօր լուրջ մտահոգություններ կը դիմագրաւէ անկայուն ներկայի ու անորոշ ապագայի իմաստով: Միջազգային օրէնքին ճշտած սկզբունքներուն համաձայն, սուրիահայութեան իրաւունքները կարելի է երեք հիմքերու վրայ կառուցել.-

Ա) Ինքնութեան պահպանում.

Ֆիզիքական գոյութեան երաշխաւորութիւն, ցեղասպանութենէ, պատերազմական ոճիրներէ եւ ցեղային մաքրագործումներէ հեռու պահուելու կամ չենթարկուելու երաշխիքներ:

Կրօն, լեզու, մշակոյթ եւ կառոյցներ պահպանելու եւ պաշտպանելու երաշխաւորութիւն:

Բ) Հաւասարութեան եւ անխտրականութեան հաստատում.

Պետկան բարձրագոյն պաշտօններ ստանձնելու համահաւասար առիթներ: Օրինակ, ներկայ Սուրիոյ սահմանադրութեան համաձայն, երկրին նախագահը պէտք է իսլամ ըլլայ, ինչ որ խտրականութիւն է ոչ-իսլամ քաղաքացիներուն հանդէպ եւ կը հակասէ մարդկային իրաւանց սկզբունքներուն: Այստեղ պէտք է նշել, թէ համահաւասար քաղաքացիի հանգամանքը ո՛չ միայն պաշտօնական բնոյթ պէտք է կրէ, այլ նաեւ գործնական եւ ազդեցիկ դառնայ:

Գ) Սուրիոյ քաղաքական, տնտեսական ու ընկերային կեանքի մէջ գործօն մասնակցութիւն.

Իրաւական միջոցներով՝ պետական, տեղական ինքնակառավարման մարմիններու, վարչական միաւորներու մէջ հայութեան տեղ տրամադրել: Օրինակ, ընտրական օրէնք ներառել այնպիսի տրամադրութիւններ, որոնք փոքրամասնություններուն ներգրաւուածութեան արդար առիթներ կը ստեղծեն: Սուրիահայութեան մշակութային ինքնութիւնը եւ ընկերութեան մէջ ներգրաւուածութիւնը ամրագրելու համար, անհրաժեշտ

է սուրիահայութեան՝ Սուրիոյ հանրային կեանքին մէջ գործնական մասնակցութիւնը ապահովել իր քաղաքական, տնտեսական ու ընկերային ոլորտներով: Իրաւական միջոցներ ու եղանակներ պէտք է որոնել, հաստատելու համար թէ սուրիահայերուն ներգրաւուածութիւնը քաջալերուած, յարգուած, գործադրուած ու հսկուած է, յատկապէս այն շրջաններուն մէջ, ուր սուրիահայութիւնը թուային/մշակութային/պատմական մեծամասնութիւն կամ իւրայատկութիւն մը ունի: Այս ներգրաւուածութիւնը ցուցական ըլլալէ աւելի, առիթ պէտք է տայ սուրիահայութեան իր դիմագրաւած խնդիրները լուծելու պետաիրաւական արդար համակարգին ծիրին մէջ:

ՍՈՒՐԻԱՀԱՅՈՒԹԵԱՆ ԴԵՐՆ ՈՒ ՏԵՂԸ ՅԵՏՊԱՏԵՐԱԶՄԵԱՆ ՍՈՒՐԻՈՅ ՄԷՋ

Ձեկոյցի այս բաժինով կարծիքներու եւ տեսակէտերու շարք մը պիտի ներկայացուի, որ կը վերաբերի սուրիահայութեան բոլոր զանգուածներուն, ըլլան անոնք Սուրիոյ մէջ, կամ դուրս:

Սուրիահայութիւնը մինչ օրս, Սուրիոյ մէջ ընդհանրապէս հակազդող ընկերութիւն եղած է: Հետեւաբար, հակազդող ընկերութիւն մը ըլլալէ անցնիլ ՆԱԽԱԶԵՌՆՈՂ ընկերութեան:

Տէր կանգնիլ սուրիահայութեան դարերու վրայ կերտած պատմամշակութային հարստութեան եւ ամանդին:

Համազգային օժանդակութեամբ եւ զօրակցութեամբ շարունակել սուրիահայութեան վերականգնումի աշխատանքները:

Հայոց Յեղասպանութեան փաստերն ու վկայութիւնները վերացնելու աշխատանքը կասեցնել: Թրքական գործօնին դերակատարութիւնը նուազեցնել:

Սուրիոյ մէջ համակեցութեան ու հաշտութեան նպաստել, սուրիահայութեան խաղաղարարի եւ հաշտարարի դերին զարկ տալ, նպաստել հակամարտող կողմերու տեսակէտերու մօտեցման, ինչպէս նաեւ Սուրիոյ տարբեր ընկերութիւններուն միջեւ սերտ յարաբերութիւններու եւ գործակցութիւն եզրերը առաւել զարգացնել:

Միջազգային ատենաներու եւ կազմակերպութիւններու մօտ նպաստել Սուրիոյ իսկական դիմագիծի ներկայացման, ինչպէս նաեւ օգտագործել միջազգային մարդկային իրաւանց օրէնքներու ընձեռած բոլոր առիթներն ու հնարաւորութիւնները:

Հայաշխարհէն դուրս, օտար աշխարհին հետ մնայուն հաղորդակցութեան մտնել:

Տէր կանգնիլ պատերազմին պատճառով եւ ընթացքին կորսուած բոլոր իրաւունքներուն եւ իրաւական բոլոր միջոցներով օգտուիլ վնասուց հատուցման հնարաւորութիւններէն:

Արեւմտահայ մարդու կերպարը պահպանել:

ԵԶՐԱՓԱԿՈՒՄ

Ձեկոյցը եզրափակելու համար, կ'արժէ մէջբերել Մարթին Լուտըր Քինկի հետեւեալ խօսքը. «Ընդհանրապէս միշտ, ստեղծագործող ու նուիրուած փոքրամասնութիւնը, աշխարհը ատելի լաւ տեղ դարձուցած են»: Սուրիահայութիւնը, որպէս գիտակից ու կազմակերպուած փոքրամասնութիւն, Սուրիան ատելի լաւ տեղ դարձնելու կարողութիւնն ու ներուժը ունի:

The Syrian-Armenian Community and the Post-War Syrian State
(Summary)

Kevork Hagopian
kevomayy@hotmail.com

Taking the Syrian minorities' perspectives into consideration, one may argue that neither "Islamism" nor "Arabism" seems likely to unite the diverse communities of Syria. Sectarian tensions among the Muslims; non-Muslim minorities' and Muslim moderates' fears of the emergence of an Islamic state; Kurdish (and other ethnic minorities') concerns about Arabisation are issues that should be taken seriously.

Therefore, the adoption of Syrian state citizenship as a unifying factor may lead the diverse multinational and multi-ethnic communities of Syria to reconcile their disagreements. Bearing in mind the integrating role various ethnic and religious minorities played in building modern Syria, Syrian citizenship can serve as a common denominator and ensure equality and the rule of law to all Syrians without any sort of discrimination.

In this context, the paper highlights the preoccupations of the Syrian Armenian community concerning the current political instability and Syria's ambiguous future. The paper notes a number of matters of principle which, arguably, could guarantee minority rights and their sustainability in the Syrian state. These include protection of Armenian identity; equality and non-discrimination; active participation in political, social and economic life; respect for human rights provisions; minority group rights vis-à-vis historical or cultural places and transnational considerations; measures against marginalization and exclusion in all walks of Syrian socio-political, cultural and economic life.